տեղերն յայտնի չեն. (41) Սհառն քաղաք, Զօղայ քաղաք, Զերգունի դաշտակ, Հոմէնք տեղի։ (42) Ներսմէհրայ ուխտ, Ջրվէշտիկ։ (51) Աստղաբլուր, Տրտուական գետ (գուցէ Թարթառն իցէ). Զղախտեղի։ Ճինող թագաւորքն և իշխանքն են Աղուանից (43) Վաչական արքայ, Ուռնայր արքայ։ Ջիւանշիր իշխան, Սանատրուկ իշխան, Ջաւատ, Ջումշուտ, Ջհանկիր իշխանք են։

Ճիշտ սխալ է Աղուանից աշխարհի արեւելեան նահանգը կամ գաւառները համարել Փայտակարան և դնել Երասխի և Կուրի արեւելեան կողմերումն, և մինչեւ անգամ վստահութեամբ ասել "Փայտակարան քաղաքն այժմ կոչվում է Սալիան"։ (Աղուանք և գրացիք իւր) Փայտակարանը շատ պատմութեան ասելով՝ է Փայտաշատ՝ այն է անտառապատ Լանքարանը[1]*) իսկ նորա գաւառները "զոր այժմ Ատրպատական ունի" ըստ Խորենացւոյն, են Երասխի աջ կողմերում եղածները, բայց թէ ըստ Խորենացւոյ աշխարհագրութեան Փայտակարան նահանգի սահմանները անցել են Երասխի ձախ կողմն և հասել են մինչեւ Բաղաւան (Բագու) և Եօթնփորակեան Բագինք (Սուրախանի). այդ շատ տեղ է պատահել, ըստ որում երբեմն գաւառները և մինչեւ անգամ նահանգները այս և այն աշխարհից վերցրած միացրել են մի ուրիշ աշխարհի հետ։ Զոր օրինակ Նախիջեւան քաղաքը իւր Ջահուկ, Երնջակ, և Գողթն գաւառներովն որ ինկայէս Արարատեան նահանգի արեւելեան մասն են, և ըստ Խորենացւոյ արքունի կալուած էր համարւում, բայց թագաւորք պարգեւում էին երբեմն Սիւնեաց իշխանին երին և երբեմն Վասպուրականի իշխաններին, երբ մի մեծ ծառայութիւն էին անում տէրութեան։ Եւ այսպէս է պատահել, որ Խորենացւոյ աշխարհագրութեան մէջ երեւում է մեծ սխալը, այն է՝ յետ ասելոյ «Սիւնիք յեկից կայ Արարատայ"։ Սիւնեաց և Արարատայ*

[1])Սարգիս եպիսկոպոս Ջալալեանց իւր ստորագրութեան մէջ Հատ Բ. 266 ասէ. "Փայտակարան է դաշտ ընդարձակ, ունի զհամանուն քաղաք յեզր Կասպիական ծովուն, թուի թէ փոփոխութեամբ անուան կոչի Լանքարան Ուրանոր Թագաւորեաց արքայն Սանատրուկ"։

Մատթէոս Ուռհայեցին յօդ. ՃԻԶ. զՊարտաւն անուանէ Փայտակարան։